

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:

I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է հայերենի ուղղագրությանը և կետադրությանը վերաբերող 5 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

III մասում առաջարկվում է գրել շարադրություն՝ 3 թեմայից ընտրելով միայն մեկը: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր: Շարադրել գրագետ, թույլ չտալ ուղղագրական, կետադրական, ոճական և շարադասական սխալներ:

Շարադրությունը գնահատվում է երկու բաղադրիչով.

ա) բովանդակություն՝ 5 միավոր (տրամաբանություն, ինքնուրույն մտածողություն, ստեղծագործական մոտեցում),

բ) շարադրանքի որակ՝ 5 միավոր (ուղղագրություն, կետադրություն, բառագործածություն, քերականություն):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բաց թողած տառերը և երկհնչյունները.*

Ու__ևոր, խորագ__ին, տա__որոշել, ըն__իմանալ, ապու__տ, անգու__ական, մի__օրե, միլ__րդ, հանր__գուտ, վեր__լք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները.*

Հանգուցավոր_____ Հորեղբայր_____

Երեսնամյա_____ Ատենակալ_____

Իշուկ_____ Ուղղաձիգ_____

Հրապուրիչ_____ Հուզառատ_____

Գինեվետ_____ Ածխահատ_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*

Մերձ (քաղաքային), տարե (վերջ), լեփ (լեցուն), հարավ (արևմտյան), հարյուր (քսանչորս), տեսակ (տեսակ), հայերեն (ֆրանսերեն), ի (զեն), ծովից (ծով), ըստ (ամենայնի)।

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. *Ընդգծել այն բաղադրյալ հասուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.*

Հայաստանի Ազգային Գրադարան, Խրիմյան Հայրիկ, Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, Բնապահպանության Նախարարություն, Դավթակ Քերթող, Սմբատ Գունդատաբլ, Էգեյան Ծով, Գրիգոր Վկայասեր, Իվան Ահեղ, Դոնի Ռոստով, Իրանի Իսլամական Հանրապետություն, Սահակ Պարթև Կաթողիկոս, Սուրբ Սարգիս Եկեղեցի, Հուլիոս Կեսար, Գարեգին Բ, Հակոբ Մեղապարտ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. *Կետադրել.*

Անդնդախոր կիրճում լսվում է Դեբեդի շառայունը միօրինակ ու թախծալի: Գետի ափին ուղղաձիգ բարձրանում են պղնձագույն ժայռերը լերկ սրածայր գագաթներով: Երբ հայացքդ զգում ես այդ քարաժայռերին անսովոր սարսուռ ես զգում: Թվում է թե ուր որ է կփլվեն դրանք և ահավոր բարձունքից կթափվեն ձորը իրենց փլատակների տակ ծածկելով ամեն ինչ: Խիտ անանցանելի ու խավարչտին անտառներ կան այնտեղ: Ամեն քայլափոխում հանդիպում են լայնատերև թխկիներ երկարակյաց ընկուզենիներ որոնց սաղարթները մեղմորեն օրորվում են քամուց անտառը լցնելով հուժկու շառայունով:

ՄԱՍ II

Կարդավ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Աշխարհահռչակ կոմպոզիտորը՝ Արամ Խաչատրյանը, այն հազվագյուտ արվեստագետներից է, որոնք կենդանության օրոք արժանացան համաշխարհային փառքի և ճանաչման: (2) Մի հանգամանք, սակայն, զայրացնում էր Խաչատրյանին. որ երկիրն էլ այցելեր, նախ և առաջ հատուկ հիացմունքով կատարում էին «Մուսերով պարը»՝ գրված «Գայանե» բալետի համար:

(3)-Թողած «Սպարտակը», իմ մյուս ստեղծագործությունները՝ միշտ պատահականորեն ստեղծված այդ պարի մասին են խոսում,- հաճախ էր ասում նա՝ չափազանց վրդովված:

(4)Երբ Խաչատրյանը գրեց «Գայանեն», նախնական տարբերակում «Մուսերով պարը» չկար. ահա զավեշտալի մի պատմություն՝ կապված «Մուսերով պարի» ստեղծման հետ: (5) Բալետը Մոսկվայում պատրաստվում էր բեմադրության, իսկ ինքը՝ հեղինակը, այդ օրերին Կույբիշևում էր:

(6) Մի օր անսպասելիորեն կոմպոզիտորի տանը հայտնվեցին Մեծ թատրոնի մի խումբ աշխատակիցներ տնօրենի ուղեկցությամբ. պարզվեց՝ «Գայանեի» մեջ ընդգրկված մի անվանի մենապարուհի դժգոհ է, որ չունի անձամբ իր համար գրված պար:

(7) -Արա՛մ Իլյիչ, Ձեզ համար ի՞նչ դժվար բան է մի պար հորինելը,- աղերսական ձայնով խնդրում էին եկվորները.- խնդրում ենք մտնել մեր անելանելի վիճակի մեջ:

(8)Խաչատրյանը զայրացավ. հանպատրաստից ինչպե՞ս կարելի է ստեղծագործել. դա արդեն քմահաճույք է: (9)Բայց ինչ կարող էր անել. մարդիկ երկար ճանապարհ էին կտրել-անցել:

(10)Բարկացած նստեց դաշնամուրի մոտ և մատներով հենց այնպես հարվածեց ստեղներին՝ խռովված հոգին հանգստացնելու համար: (11) Ջգաց՝ բարկության պահին իջեցրած հարվածները յուրահատուկ չափով հնչեցին:

(12) Մի քանի օր անց թատրոնի աշխատակիցները հրաժեշտ տվեցին կոմպոզիտորին խանդադատանքով՝ Մոսկվա տանելով «Մուսերով պարի» նոտաները. այդ մոլեգնող մեղեդին համընդհանուր ընդունելություն գտավ:

(13)Անգլիայում մեծանուն կոմպոզիտորը հրավեր ստացավ առաջին նախարարից:(14) Երբ ուղեկցող անձանց հետ մտավ լուսավոր առանձնարանի ընդարձակ հյուրասենյակը՝ ձեռունից կախված հսկայական ջահով, ոչ ոք չդիմավորեց նրան: (15)Շքեղաշուք դահլիճը դատարկ էր ու լուռ: (16)Սովոր լինելով լեփ-լեցուն դահլիճների և հոտնկայս ծափահարությունների՝ Խաչատրյանն ապշեց: (17)Բայց կատարվեց անսպասելին. դիմացի պատին տեսավ իր մեծադիր նկարը՝ դիրիժորական փայտիկը ձեռքին, և երփներանգ ծաղիկների մեծ փնջեր՝ բյուրեղապակյա ծաղկամաններով դրված նկարի տակ: (18)Նա մերթ ակնապիշ նայում էր նկարին, մերթ շուրջօրոքը, երբ նկարի հետևից որոտընդոստ ձայնով հնչեց «Մուսերով պարը»:

Ըստ Ռ. Չարյանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. 13-րդ և 14-րդ նախադասություններից դուրս գրել 4 ածական.

Ա

ՌԱՋԱԴՐԱՆՔ 7. 12-րդ նախադասությունից դուրս գրել 2 դերանուն և որոշել տեսակը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. 15-րդ նախադասության դատարկ և լուռ բառերի համար գրել երկուական հոմանիշ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. 10-րդ և 12-րդ նախադասություններից դուրս գրել անկախ դերբայների օրինակներ.

Անորոշ /1 օրինակ/ _____

Ենթակայական /1 օրինակ/ _____

Հարակատար /2 օրինակ/ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Որոշել 10-րդ նախադասության ստորոգյալների եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. 18-րդ նախադասությունից դուրս գրել անհոդակապ 2 բարդ բառ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. 6-րդ նախադասությունից դուրս գրել Ա ներքին հոլովման պատկանող 2 գոյական.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. 3-րդ նախադասությունից դուրս գրել ածանցավոր 2 բառ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. 17-րդ նախադասությունից դուրս գրել ուղիղ խնդրի 2 օրինակ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. 5-րդ նախադասությունից դուրս գրել բացահայտիչը և բացահայտյալը և նշել բացահայտչի տեսակը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. 13-րդ նախադասությունից դուրս գրել տեղի պարագայի 1 օրինակ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. 12-րդ նախադասությունից դուրս գրել հետադաս դերբայական դարձվածք.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. 10-րդ և 11-րդ նախադասություններից ո՞րն է համադասական, գրել նախադասությունը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. Կազմել 1-ին նախադասության գծապատկերը (համարակալումը կատարել բնագրի նախադասության վրա).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. 3-րդ նախադասության ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակի խոսքի.

ՄԱՍ III

Կատարել տրված 3 առաջադրանքից միայն մեկը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.1 Հնչում է <<Սուսերով պարը>> ... /ստեղծագործական երևակայություն/:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.2 Գրել շարադրություն «Փառավոր ուղի» խորագրով՝ բնագրից (Մաս II) օգտագործելով 15 բառ և բառակապակցություն /շարադրության մեջ ընդգծել դրանք/:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.3 Գրել ազատ շարադրություն «...Ու սիրտս երգում է» վերնագրով:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

